

ՅՈՐԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ԹՕՓԱԼԵԱՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ ԱՐԲՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Յորդանանի մայրաքաղաք Ամմանի տեղական Ազգային Խորհուրդի եւ մշակութային, մարզական եւ քարեսիրական միութիւններու գործակցութեամբ տեղի Ս. Թադէոս եկեղեցւոյ կառուցման երեսնամեակը եւ Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Թօփալեանի քահանայական ձեռնադրութեան 35-ամեակը վերջերս նշուեցան հանդիսութիւններու շարքով մը:

Վերոնշեալ հանդիսութիւններում հրաւիրուած էին Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն՝ Գերշ. Տ. Նաւասարդ Եպս. Կճոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ Գերշ. Տ. Վարդան Եպս. Տէմիրճեան, Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն՝ Հոգեշ. Տ. Արամ Վրդ. Աթէշեան, ինչպէս նաեւ Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արք. Չիմչիմեան:

Յորելեանական հանդիսութիւններու շարքին՝ Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան կատարեց Ս. Թադէոս եկեղեցւոյ նորոգուած Խորանին եւ Մկրտարանին օծումը: Ապա պատարագեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ս. Պատարագին ներկայ գտնուեցան քոյր եկեղեցիներու բարձրաստիճան հոգեւորականներ: Յընթացս Ս. Պատարագի, քարոզեց Պատրիարք Սրբազանը եւ կարդացուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը, որում մէջ Վահան Սրբազանին կը շնորհուէր Արքութեան աստիճան:

«ԶԱՀԱԿԻՐ» Կահիրէ

12.11.98